լոց, եւս և գործարանին Նօբէլի, որ զնաւթն զտէ, և նաւթաբուղխ գործարանացն ի Բալախանի, իսկ Կայսրուհին ընդ ժառանգին նաեւ ի Սուրախանի, ուր հրաբուղխն է և կրակապաշտից տաբուշանն։ Նորատեսիլ էին գլխարկք և զգեստք խանիցն Խիվայի և Աղուանստանի. վերջնոյս գլխարկն ճիշդ նման էր գլխարկի քահանայից մերոց ի հնումն— այն է թագաձեւ, իսկ վերնազգեստն (խալաթն) բոլորովին նման էր շուրջառի մեր քահանայից, նոյնպէս և գօտին՝ ըստ նմանութեան ժամարարի գօտւոյ։

Յերկոսին երեկոյսն 18 և 19 ամսոյս սքանչելի էր ճրագավառութիւնն և հրավառութիւնն յերեսս ծովու և ցամաքին։ Նաւք, շոգենաւք և նաւակք սքանչելի իմն երեւեցուցանէին տեսողաց զշքեղութիւն ի ծովու. իսկ ցամաքային փայլումն ի մերձակայ լերինս և ի քաղաքին՝ գերազանցէին զմիմեանսքք և լուսեղէն տառքն և բառքն «Աղէքսանդր Գ. և Մարիա», եւս և«Боже, царя храни!» հիացուցանէին զտեսողս, մինչեւ Կայսրն իսկ ի ժամ հացկերութեան ասաց Կայսրուհւոյն ի լուսամտէ անտի ցուցանելով զհրավառութիւնն ի լերին զօրանոցի (Բայիլ) և գովելով ասաց «տեսէք, որքան գեղեցիկ է լեռնային լուսափայլութիւնն»։

Այսպէս խնդաց Բագուն՝ աւուրս երկուս այցելութեամբ Օգոստափառ Կայսեր. խնդասցէ և յերկրորդումն ընդ շնորհաբեր այցելութեամբ Վեհափառ Հայրապետիդ, և այսպէս պանծասցի Բագուն դարուց ի դարս և զարդարեսցէ զէջս պատմութեան իւրոյ մեծափառ անուամբք Օգոստափառ Աղէքսանդր Կայսեր և Ձերբդ Վեհափառութեան։

ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ

Նորին կայսերական մեծութեան Աղէքսանդր Աղէքսանդրովիչի մուտ գործելը Բագու քաղաքը՝ հանդերձ արքայական ընտանեօք։

Լրագրերը քանի ամիսներ յառաջ գրում և հրատարակում էին որ Օգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց Աղէքսանդր Աղէքսանդրովիչն պէտք է այցելէ Կովկասեան աշխարհին։